Պայմանագրի կողմ. «ՕքսԵՋեն» երիտասարդության և կանանց իրավունքների պաշտպանության հիմնադրամ

Ֆինանսավորող գործակալություն. Եվրահանձնաժողով

«ԵՄ-Հայաստան. Համագործակցություն հանուն փոփոխության» շրջանակներում

Ծրագիր. «ՀԱՎԱՍԱՐ - ԵՄ-ն հանուն կանանց իրավազորման Հայաստանում»

Ենթադրամաշնորհի հայտարարություն

Եզդիական համայնքի հզորացում՝ խթանելու տեղական մակարդակում ակտիվ մասնակցությունը

Հայտարարության և հայտի հղումը. EU4GE-OxY-FSTP07

ԾՐԱԳՐԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏԸ.

31-ը հուլիսի 2024, 18:00 Երևանի ժամանակով

Նշում. նախքան ծրագրի առաջարկների առցանց հանձնումը՝ թույլատրելի սահմաններում լրացուցիչ պարզաբանումներ տրամադրելու նպատակով **հուլիսի 25-ին՝ ժամը 11:00-ին,** կկազմակերպվի տեղեկատվական առցանց հանդիպում ԶՈՒՄ հարթակում:

Սույն հանդիպմանը մասնակցելու համար նախապես՝ **հուլիսի 24-ին մինչև 13:00** grants@oxygenfund.am հասցեին ուղարկեք մասնակցության հայտը՝ նշելով **կազմակերպության անունը և մասնակցող անձ(եր)ի տվյալները. անուն, ազգանուն և էլ.հասցե**: Բոլոր գրանցվածներին էլեկտրոնային նամակով կտրամադրվի առցանց հանդիպման հղումը:

Ենթադրամաշնորհի ժամանակահատվածը. մինչև 10 ամիս

Ենթադրամաշնորհի գումարը. 20,000 Եվրո

Ենթադրամաշնորհի սկիզբը. Սեպտեմբեր 2024

Կարող են մասնակցել. Հայաստանում օրինական գրանցում ունեցող, շահույթ չհետապնդող կազմակերպությունները: Եզդիական համայնքի հետ աշխատանքի փորձառությունը պարտադիր է: Կազմակերպությունները, որոնք «ՀԱՎԱՍԱՐ» ծրագրի շրջանակներում արդեն իսկ ստացել են ենթադրամաշնորհ, չեն կարող դիմել սույն ենթադրամաշնորհին:

Ծրագրի առաջարկի լեզուն. անգլերեն (նախընտրելի, բայց ոչ պարտադիր) կամ հայերեն

Միայն մեկ ենթադրամաշնորհ է տրամադրվելու:

Դիմելը. Ծրագրի առաջարկները պետք է ուղարկվեն grants@oxygenfund.am հասցեին մինչև վերջնաժամկետի ավարտը: Google-ով կամ այլ էլեկտրոնային հղումներով ներկայացվող առաջարկները չեն ընդունվելու:

Դիմելու ընթացակարգի մանրամասները ներկայացված են **Հոդված 7**-ում:

1. «ՕքսԵՋեն» հիմնադրամը

«ՕքսԵՋեն» երիտասարդության և կանանց իրավունքների պաշտպանության հիմնադրամը շահերի պաշտպանության և զարգացման հիմնադրամ է, որն առաջնորդվում է աղքատությունից և տառապանքից զերծ Հայաստանի իր տեսլականով, որտեղ կանայք և տղամարդիկ կարող են իրացնել իրենց իրավունքները և մասնակցել իրենց կյանքի վրա ազդող որոշումների կայացման գործընթացներում: Իր ծրագրերն իրականացնելիս «ՕքսԵՋեն»-ը հիմնվում է 5-ամյա ռազմավարության առանցքային ուղղություններով. Գենդերային հավասարություն, Երիտասարդների իրավազորում, Հաշվետու կառավարում, Տնտեսական արդարություն և Դիմակայունության բարձրացում:

2. «ՀԱՎԱՍԱՐ» ծրագիրը

«ՀԱՎԱՍԱՐ - ԵՄ-ն հանուն կանանց իրավազորման Հայաստանում» ծրագիրը (այսուհետ՝ «ՀԱՎԱՍԱՐ») ֆինանսավորվում է ԵՄ կողմից: Ծրագրի նպատակն է պետական և ոչ պետական կառույցների հետ համագործակցաբար ձեռնարկել նշանակալից գործողություններ, որոնք ուղղված են գենդերային բռնության և խտրականության բոլոր ձևերի կանխարգելմանը՝ Հայաստանում կանանց, տղամարդկանց, աղջիկների և տղաների համար հավասարության խթանմանը՝ հաշվի առնելով վերջիններիս առանձնահատկությունները: Ծրագրի հիմնական բաղադրիչներն են. ա/ գենդերային բռնության բացառում, բ/ տնտեսական իրավազորում և սոցիալական իրավունքներ և գ/ առաջնորդություն, մասնակցություն և երկխոսություն:

«ՀԱՎԱՍԱՐ» ծրագրով նախատեսված է տրամադրել ենթադրամաշնորհներ (FSTP) կոալիցիաներին, կոնսորցիումներին և հասարակական կազմակերպություններին, որոնք աշխատում են խտրականության տարբեր ձևերին առնչվող կանանց և աղջիկների հետ, ինչպես նաև խթանում են նրանց կառուցողական մասնակցությունը միջոցառումներին և հնարավոր լուծումներին՝ ֆինանսական և տեխնիկական աջակցության միջոցով:

Սույն ենթադրամաշնորհը՝ նախորդ ու ապագա բոլոր ենթադրամաշնորհների հետ միասին, նպաստելու է Հայաստանում խտրականությունից և բռնությունից զերծ հասարակություն կառուցելուն:

3. Ծրագրի առաջարկը

Սույն ենթադրամաշնորհային հայտարարությունը գործում է «ՀԱՎԱՍԱՐ - ԵՄ-ն հանուն կանանց իրավազորման Հայաստանում» ծրագրի շրջանակներում:

Հայաստանը դրական քայլեր է կատարել կանանց քաղաքացիական մասնակցության և որոշումների կայացման մեջ ընդգրկվելու իրավունքը խթանելու ուղղությամբ: Արդյունավետ մասնակցությունը քաղաքացիական կյանքում, որոշումների կայացման և քաղաքականության ձևավորման մեջ հիմնարար իրավունք է, որը երաշխավորված է տարբեր իրավական փաստաթղթերով: Հայաստանը վավերացրել է մի շարք միջազգային կոնվենցիաներ և դաշնագրեր, որոնք վերաբերում են կանանց իրավունքներին, մասնավորապես, էթնիկ փոքրամասնությունների կանանց և աղջիկների իրավունքներին: Դրանք են՝ ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (ՔՔԻՄԴ), Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան (ԿՆԽՎԿ), Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (ՏՍՄԻՄԴ), Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան: Հայաստանը ստորագրել է նաև մեկ այլ ռազմավարական փաստաթուղթ՝ Պեկինի հռչակագիրը և Գործողությունների ծրագիրը (ՊԳԾ), որն ընդունվել է 1995 թվականին Կանանց նվիրված չորրորդ համաշխարհային խորհրդաժողովում՝ պարտավորություն ստանձնելով մշակել և իրականացնել գենդերային հավասարության ազգային ռազմավարություններ և քաղաքականություններ: Բացի դրանից՝ 2001 թվականից Հայաստանը հանդիսանում է ԵԽ անդամ երկիր, իսկ 2017 թվականին ստորագրվել է ԵՄ-Հայաստան Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (ՀԸԳՀ), որի նպատակն է գենդերային հավասարության ամրապնդումը, սեռի, ռասայի կամ էթնիկ ծագման պատճառով խտրականության դեմ պայքարը և կանանց համար հավասար հնարավորությունների ապահովումը:

Այս փաստաթղթերը պարտավորեցնում են Հայաստանին պաշտպանելու և խթանելու ազգային փոքրամասնությունների իրավունքները, ապահովելու նրանց հավասար մասնակցությունը հանրային և քաղաքացիական կյանքում:

Հայաստանի Հանրապետության (ՀՀ) ամենամեծ ազգային փոքրամասնություն հանդիսացող եզդի համայնքը կազմում է ՀՀ բնակչության 1,08 տոկոսը[1], սակայն չկա ակտիվ ներգրավվածություն տարբեր մակարդակներում որոշումների կայացմանը, ներառյալ՝ կանանց և աղջիկների:

[1] ՀՀ վիճակագրական կոմիտե, 2011 թ. մարդահամարի արդյունքներ, https://armstat.am/am/?nid=532:

Ծրագրային առաջարկի նպատակը. Խթանել ակտիվությունը, ուժեղացնել առաջնորդությունը և խթանել եզդի համայնքի մասնակցությունը Հայաստանում կայուն զարգացմանն ուղղված ջանքերին:

Ակնկալվող արդյունքները.

ա/ Եզդի բնակչությունը, ներառյալ աղջիկներն ու կայանք, պատրաստ է և իրավազորված իրենց համայնքներում ակտիվ դերակատարություն ունենալուն և որոշումների կայացմանը մասնակցելուն:

բ/ Հանրությունն իրազեկված է եզդի բնակչության ներուժի մասին՝ հաղորդակցության տարբեր ուղիներով քարոզարշավի շնորհիվ:

Գործողությունների թվում կարող են լինել.

- Կարողությունների զարգացում, հաշվի առնելով կարիքները, հետաքրքրություններն ու ծրագրի գերակայությունները
- Առաջնորդության զարգացմանը, համայնքի կազմակերպմանն ու մոբիլիզացմանն ուղղված աշխատաժողովներ
- Որոշակի թեմաների շուրջ համայնքում իրազեկության բարձրացում
- Մշակութային միջոցառումներ և տոնակատարություններ՝ միասնությունը խթանելու և եզդի համայնքի ավանդույթներն ու ժառանգությունը ցուցադրելու համար, ապահովելով այս և այլ համապատասխան միջոցառումների լուսաբանումը լրատվամիջոցներում
- Ժամանցային հատուկ միջոցառումներ՝ ուղղված հայ և եզդի համայնքներին, ներառյալ երիտասարդ կանանց և աղջիկներին
- Եզդիական համայնքին առնչվող կոնկրետ հարցերի վերաբերյալ առաջարկությունների հավաքագրում և տարբեր մակարդակներում շահերի պաշտպանության գործունեության իրականացում
- Եզդի կանանց ներդրումների և մարտահրավերների մասին իրազեկվածության բարձրացման արշավ
- Հարաբերությունների հաստատում տեղական ՀԿ-ների, կառավարման մարմինների հետ՝ ռեսուրսների օգտագործման և համայնքային հախաձեռնություններին աջակցելու համար
- Քաղաքականություն մշակողների և շահագրգիռ կողմերի հետ համագործակցություն շահերի պաշտպանության հանդիպումների և աշխատաժողովների միջոցով, որպեսզի խթանվի համայնքի զարգացմանն աջակցող քաղաքականությունը: Նաև, գործողություններ, որոնք նպաստում են եզդի աղջիկների և կանանց համար աջակցող միջավայրի ձևավորմանը

Ողղակի շահառուների առնվազն 60%-ը պետք է կազմեն կանայք և աղջիկները:

Ողղակի շահառուների առնվազն 30%-ը պետք է կազմեն երիտասարդները:

Դիմողները պետք է հստակ ներկայացնեն, թե ինչի համար են ծախսվելու ենթադրամաշնորհի միջոցները, և որքանով է ծրագրի առաջարկը բավարարում սույն հայտարարությամբ առաջադրված նպատակներին:

Հետևյալ գործողությունները կլինեն անընդունելի.

- Գործողություններ, որոնք վերաբերում են անհատական հովանավորություններին՝ աշխատաժողովներին, սեմինարներին, կոնֆերանսներին և կոնգրեսներին մասնակցելու համար
- Անհատական ուսուցման կամ դասընթացի կրթաթոշակներ
- Աջակցություն քաղաքական կուսակցություններին
- Բարեգործական դրամահավաքներ

Նշում. Ենթադրամաշնորհը չի կարող օգտագործվել ֆինանսավորելու համար արդեն իսկ իրականացված գործողություն/ներ: Ֆինանսավորման ենթակա գործողությունները չեն կարող սկսվել նախքան ենթադրամաշնորհի տրամադրումը:
Գործողությունների կրկնակի ֆինանսավորումն ընդունելի չի կարող լինել:

4. Հայտադիմումի փաթեթը

Հայտը ավտոմատ կերպով մերժվում է, եթե ներկայացվում է սահմանված **վերջնաժամկետից** հետո:

Գնահատման համար կդիտարկվեն միայն **ամբողջական** հայտերը:

Ամբողջական փաթեթը ներառում է հետևյալը.

ա/ Ծրագրի առաջարկ և բյուջե՝ պահանջվող ձևանմուշներով: Վերջիններս կցված են հայտարարությանը որպես **Հավելված 1. Ծրագրի առաջարկի ձևանմուշ** և **Հավելված 2. Բյուջեի ձևանմուշ**

բ/ Պետական գրանցման վկայական:

5. Ծրագրի առաջարկի գնահատման չափորոշիչներ

Ծրագրի առաջարկի փաթեթը գնահատվելու է ընտրող հանձնաժողովի (այսուհետ նաև ԸՀ) կողմից, հիմք ընդունելով հետևյալ հիմնական չափորոշիչները.

5.0 Եզդիական համայնքի հետ ծրագրերի իրականացման փորձ. առավելագույնը 16 միավոր

5.1 Ծրագրի առաջարկի համապատասխանությունը. առավելագույնը 32 միավոր

- Խնդրի վերլուծության ու առաջարկվող լուծումների որակը: Որքանով է այդ ամենը արտացոլում առկա քաղաքականությունները և թիրախ խմբերի հետաքրքրություններն ու շահերը:

- Առաջարկվող միջամտությունների որակը. որքանով են դրանք արձագանքում բացահայտված խնդիրներին:
- Իրավազորում և սոցիալական ներառում:
- Գործողությունների մեջ շահառուների ներգրավում. որքանով է ծրագիրը խթանում թիրախ խմբերի հավասար մասնակցությունը՝ առանց սեռով, ռասայական պատկանելությամբ, էթնիկ ծագմամբ, սոցիալական կարգավիճակով կամ կրոնով պայմանավորված խտրականության:

5.2 Ծրագրի նախագծի իրագործելիությունը. 30 միավոր

- Միջամտության տրամաբանության հետևողականություն. ծրագրի նպատակի, պլանավորված արդյունքների և ակնկալվող արդյունքների համահունչ լինելը:
- Իրականացման մեթոդաբանություն. հիմնվելով նախկին փորձի և լավագույն փորձից քաղված դասերի վրա՝ առաջարկը պետք է ցույց տա, թե ինչպես են ակնկալվող արդյունքները հասանելի:
- Ծրագրի պլանավորում. առաջարկվող ժամկետները և գործունեության պլանավորումն իրատեսական են տվյալ հանգամանքներում և առկա բյուջեով:
- Կառավարման հստակ կառուցվածք՝ պարտականություններ, համակարգում և համագործակցության եղանակներ:
- Ռիսկերի գնահատում և մեղմում:
- Ծրագրի իրականացման ընթացքում տվյալների հավաքագրման եղանակներ և աղբյուրներ, հաշվետվողականություն և ծրագրի մոնիթորինգ:

5.3 Առաջարկվող ծրագրի կայունություն. 10 միավոր

- Կայունության պլանավորում. հայտատուն ցույց է տվել հստակ ուշադրություն և համապարփակ պատկերացում ծրագրի կայունության և ծրագրի փակումից հետո դրական ազդեցություններն ու ազդեցություններն ապահովելու համար անհրաժեշտ քայլերի վերաբերյալ:
- Կարողությունների զարգացում. առաջարկը նպաստում է անհատի և/կամ կազմակերպության/հիմնարկի կարողությունների զարգացմանը:

5.4 Ֆինանսական չափորոշիչ. 12 միավոր

- Համապատասխանությունը գործողությունների հետ. առաջարկվող ծախսերը, որոնք մանրամասն ներկայացված են բյուջեի ձևանմուշում, ուղղակիորեն համապատասխանում են դրամաշնորհի դիմումի ձևում նկարագրված գործողություններին:
- Բյուջեի թափանցիկություն. բյուջեն ներառում է բոլոր ծախսերի մանրամասն բաշխումը, և դրանք հստակորեն հիմնավորված են պատմողական ձևով բյուջեի ձևանմուշի երկրորդ էջում:

- Ծախսերի արդյունավետություն. առաջարկվող ծախսերը ողջամիտ են և այն սահմաններում, որոնք սովորաբար ակնկալվում են նմանատիպ ապրանքների/ծառայությունների համար:
- Տրամաբանական համամասնությամբ են բաշխված. վարչական և գործողությունների բյուջեները բաշխված են ողջամտորեն:

6. Որոշման կայացումը

Հայտերի գնահատման արդյունքերը կարձանագրվեն «Դրամաշնորհառուի ընտրություն» փաստաթղթում, որը կստորագրվի ԸՀ-ի բոլոր անդամների կողմից. մերժում ստացող/ներ, լավագույն՝ այսինքն ամենաբարձր միավորներ հավաքած թեկնածու և երկրորդ լավագույն թեկնածու: Վերջինիս համար դա կնշանակի սպասման կարգավիճակ: ՕքսԵՋենից բոլորը կստանան համապատասխան էլեկտրոնային նամակներ:

Ամենաբարձր միավորներ հավաքած թեկնածուն կանցնի կարողությունների և ռիսկերի գնահատման փուլով, իսկ ՕքսԵՋենը կարող է պահանջել որոշ գործողությունների կամ բյուջեի տողերի լրացուցիչ պարզաբանում կամ վերանայում՝ ըստ անհրաժեշտության: Սակայն սույն փոփոխություններն էական ազդեցություն չեն կարող ունենալ ծրագրի վրա և չեն խաթարի դիմորդների հանդեպ հավասարության սկզբունքը: Միակ իրավիճակը, երբ դրամաշնորհի շնորհման որոշումը կարող է չեղյալ համարվել, այն է, երբ ռիսկերի բնույթն ու չափը գնահատվում է բարձր, իսկ ստացողի կողմից հավանական է վատ իրագործումը: ԸՀ-ն տեղեկացվում է այդ մասին և սպասման կարգավիճակում գտնվող երկրորդ լավագույն թեկնածուն տեղեկացվում և հրավիրվում է նույնատիպ գնահատման:

Վերջնական որոշումը կայացնելուց հետո սկսվում է պայմանագրային փուլը:

7. Հայտից մինչև Պայմանագրի կնքում

- Ծրագրի առաջարկը պետք է ուղարկվի grants@oxygenfund.am հասցեին նախքան վերջնաժամկետի ավարտը
- Յուրաքանչյուր հայտատու կարող է ներկայացնել միայն մեկ ծրագրի առաջարկ
- Հայտի հղումը. EU4GE-OxY-FSTP07
- Ծրագրի առաջարկ ներկայացնելու վերջնաժամկետը. 31-ը հուլիսի 2024, 18:00 Երևանի ժամանակով
- **Կարևոր.** Էլեկտրոնային նամակի ՎԵՐՆԱԳԻՐ **տողում նշեք Հայտի հղումը և դիմող կազմակերպության անվանումը**

  Էլեկտրոնային նամակին կից պետք լինեն. (i) Պետական գրանցման վկայականը (ii) Ծրագրի նկարագրությունը՝ PDF կամ Word ձևաչափով, (iii) Բյուջեի ֆայլը՝ Էքսել ձևաչափով: **Նշում. համացանցային հղումներ կամ Google ֆայլեր չեն ընդունվում**

- Յուրաքանչյուր դիմող կստանա Չպատասխանել (No-Reply) գրություն-հաստատում
- Կարճ ցուցակում ընդգրկված հայտերը կգնահատվեն Ընտրող հանձնաժողովի կողմից
- Գնահատումից և ընտրության որոշում կայացնելուց հետո կարճ ցուցակում ընդգրկված յուրաքանչյուր դիմորդ կտեղեկացվի մերժման կամ սպասման կամ նախնական ընտրված լինելու մասին:
- Ենթադրամաշնորհի մրցույթում հաղթելու վերջնական ծանուցումը կուղարկվի ռիսկերի և կարողությունների գնահատման բավարար արդյունք արձանագրելուց հետո:
- Կկնքվի պայմանագիր:

Հավելված 1. Ծրագրի առաջարկի ձևանմուշ

Հավելված 2. Բյուջեի ձևանմուշ

«ՀԱՎԱՍԱՐ - ԵՄ-ն հանուն կանանց իրավազորման Հայաստանում» ծրագիրն իրականացվում է ՕքսԵՋԵն հիմնադրամի, «Եվրոպական գործընկերություն հանուն ժողովրդավարության» ՀԿ-ի, «Նիդեռլանդների հելսինկյան կոմիտե» ՀԿ-ի, «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ի, «ՎԻՆՆԵԹ Գորիս» զարգացման հիմնադրամի կողմից, «Վիննեթ Շվեդիա» ՀԿ-ի հետ համագործակցությամբ: